

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐ ՊՈԴՈԼՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ

(Համառոտ պատմություն)

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Աղջափնյա Ուկրաինայի զգալի մասը կազմող Պոդոլյան երկրի մի շարք բնակավայրերում հարյուրամյակներ շարունակ գոյատևած հայկական գաղթավայրերի պատմությունը լիովին ուսումնասիրված չէ։ Մի քանի գաղութների վերաբերյալ (Կամենեց-Պոդոլսկի, Յազլովեցի, Մոգիլյով-Պոդոլսկի, Զոլոչևի, Բերեժանի, Ռաշկովի, Ժվանեցի) հրապարակվել են ուսումնասիրություններ, լույս են ընծայվել նրանց կյանքն արտացոլող զանազան վավերագրեր՝ հրովարտականեր, դատական արձանագրություններ, կանոնադրություններ և այլն։ Մյուս՝ ավելի փոքրաթիվ բնակչություն ունեցող գաղթավայրերի մասին [Վելիկիյե և Մալիյե կրմյանե, Կուբաչիվցի, Դուբրովիցա (Բարոկ), Բար, Ուման, Յուզեֆգրադ (Բալտա), Բուչաչ, Պոդհայցի, Սատանով] բազմաթիվ հիշատակություններ կան գլխավորապես լեհ և ուկրաինացի ուսումնասիրողների, ինչպես և մի քանի հայ հեղինակների գործերում։ Շատ զնահատելի և ուշագրավ փորձեր են կատարված համառոտ ձևով ամենաանհրաժեշտ տեղեկություններ տալու նրանց վերաբերյալ (Սադոկ Բարոնչ¹, Յարոսլավ Դաշկևիչ²)։ Բայց և այնպես այդ համայնքներին վերաբերող նյութերն ի մի բերված և պատշաճ խորությամբ ուսումնասիրված չեն։ Ստորև փորձ է կատարվում շարադրելու վերոհիշյալ պոդոլյան մանր գաղութների պատմությունը։

1. ՎԵԼԻԿԻՅԵ ԱՐՄՅԱՆԵ ԵՎ ՄԱԼԻՅԵ ԱՐՄՅԱՆԵ

Պոդոլյե եկած առաջին հայ գաղթականները հանգրվանել են Սմոտրիչ գետի ափերին գտնվող այս գյուղերում և մի առ ժամանակ անց տեղափոխվել են Կամենեց-Պոդոլսկ։ Վելիկիյե կրմյանե գյուղը կոչվել է նաև Օրմյանե, Վարմյանե, Վիրմենի Վելիկի։ Այժմ գտնվում է Ուկրաինական ՍՍՀ Խմելնիցկու մարզի Կամենեց-Պոդոլսկի շրջանում։ 1947 թ. վերանվանվել է և կոչվում է Վելիկոգալիսյա։ Մալիյե կրմյանե կոչվում է նաև Օրմյանկի, Վիրմենկի, Վիրմենսկի Խուտորա։ Գտնվում է նույն շրջանում և 1947 թ. հետո կոչվում է Մալոգալիսյա³։

¹ S a d o k B a r a c z, Rys dziejów Ormiańskich, Tarnopol, 1869.

² Я. Р. Д а ш к е в и ч, Розселення вірменів на Україні в XI—XVIII ст., «Український історико-географічний збірник, вип. перший, Київ, 1971, էջ 150—181։

³ Ուկրաինեերեն կրվում է «Великозалісся» (Великі Вірмени) և «Малозалісся» (Малі Вірмени), լեհերեն՝ «Ormiady», «Ormianki»։ Վելիկոգալիսյա գյուղի վերաբերյալ համառոտ տեղեկություններ տե՛ս «Історія міст і сіл Української РСР. Хмельницька область», Київ, 1971, էջ 338։

⁴ Հանդես, № 1

Հայերի հաստատվելն այդ վայրերում պատահական չէր՝ դրանք հեռու չէին առևտրական բանուկ ճանապարհից, որը կապում էր Մոլդավիան Լեհաստանի և Ուկրաինայի հետ և կլիմայական տեսակետից գտնվում էին բարենր-պաստ պայմաններում: Փոքրիկ բլուրների վրա կառուցված այդ գյուղերի մոտով հոսում էր Սմոտրիչը, շուրջը լավ վարելահողեր և խոտավետ արոտավայրեր կային, իսկ մոտակա անտառները մատակարարում էին շինափայտ ու վառելանյութ: Շրջակա բլուրներն ու բարձրությունները պաշտպանում էին տեղանքը ուժեղ քամիներից⁴: Սկզբնաղբյուրների չգոյության պատճառով շատ բան հայտնի չէ այս գյուղերի և նրանց հնագույն բնակիչների վերաբերյալ, իսկ պահպանված տեղեկությունները խարսխված են գլխավորապես բանավոր գրույցների և ավանդությունների վրա: Ուկրաինացի գիտնական Ս. Սեցինսկին գրում է, որ Վելիկիյե Արմյանե գյուղը նախկինում գտնվել է Սմոտրիչի արևմրտյան ափին, որտեղ հայտնաբերվել են կղմինդրի ու աղյուսի բեկորներ, ինչպես և գերեզմանատան հետքեր՝ խաչքարեր, բայց առանց արձանագրությունների: Վելիկիյե Արմյանե գյուղի մոտակայքում հայտնաբերվել են Ջերնյախովյան կուլտուրային պատկանող վաղ սլավոնական բնակավայրերի հետքեր⁵: Ավանդությունն այս գյուղերի հիմնադրումը կապում է առաջին անգամ հայերի Ուկրաինա գալու ժամանակների հետ: Այդ բնույթի նյութերի վրա հենվելով Գրուսինսկին գրում է, որ Արմյանե և Արմյանկի գյուղերը հիմնադրվել են 1062 թ. հետո⁶, բայց մյուս բոլոր հեղինակները գտնում են, որ այդ վայրերում հայերը հաստատվել են XIII դարում: Մ. Բալինսկին և Տ. Լիպինսկին պնդում են, որ Լեհաստան գաղթած հայերն առաջին անգամ սկզբնապես հաստատվել են այս վայրերում և դա տեղի է ունեցել XIII դարում⁷: Ըստ Ա. Յու.-Ռուլևի այդ գյուղերը հայերին է շնորհել Գալիցիայի և Դանիլովիչ իշխանը 1280 թ.⁸ ի դիմաց իրեն մատուցած ծառայությունների⁹: Ս. Բարոնը ևս գտնում է, որ այդ գյուղերը հիմնադրել են գաղթական հայերը XIII դարում, բայց հայտնի չէ, թե նրանք ունեցել են իրենց եկեղեցին ու քահանան, թե ոչ¹⁰: Արմյանե և Արմյանկի գյուղերի մասին լեհական աշխարհագրական հանրագիտարանում տպագրված հոդվածներում կրկնվում է XIII դարում նրանց հիմնադրված լինելու վերաբերյալ կարծիքը¹¹: «Հայերը Ռուսիայում» անստորագիր մի հոդվածում, որ հրատարակվել է Լվովի «Զորյա» պարբերականում, ասվում է, թե Արմյանե և Արմյանկի գյուղերից հայերը Կամենեց-Պոդոլսկ են տեղափոխվել թաթարների ճնշման տակ¹²: Այս ենթադրությունը

⁴ Е. Сецинский, Приходы и церкви Подольской епархии, Каменец-Подольский, 1901, т. 2, 428.

⁵ Е. Сецинский, Исторические сведения о приходах и церквях Подольской епархии, I. Каменецкий уезд, «Труды Подольского епархиального историко-статистического комитета», вып. VII, Каменец-Подольский, 1895, т. 2, 195.

⁶ «Історія міст і сіл УРСР. Хмельницька обл.», т. 2, 358.

⁷ Я. Р. Дашкевич, Розселення вірменів..., т. 2, 163.

⁸ M. Bałtński, T. Lipiński, Starożytna Polska pod względem historycznym, geograficznym i statystycznym opisana, wyd. 2-e, t. 3, Warszawa, 1886, т. 2, 150.

⁹ Dr. Antoni J. Zameczki podolskie na kresach multińskich, t. 3, wyd. 2-e, Warszawa, 1880, т. 2, 110.

¹⁰ S. Barącz, Կղմ. աղյուս, т. 2, 165.

¹¹ «Словник географічний», т. VII, Warszawa, 1886, т. 2, 501.

¹² «Ормяне на Руси», «Зоря» (Письмо литературно-научное для русских родий), Львов, 1882, I (13) цветня. № 7, т. 2, 108—109.

հետո չէ իրականությունից: Պոդոլյեն այդ ժամանակ գտնվում էր թաթար-մոն-ղոլական տիրապետության ներքո և հայ գաղթականների համար անկարելի էր ապրել չպաշտպանված վայրում՝ շարունակ ենթարկված լինելով ավարա-ռու ցեղերի հարձակումներին: Իսկ ընդամենը 18 կմ հարավ գտնվող Կամենեց-Պոդոլսկը շատ հարմար էր բնակություն հաստատելու համար: XIII դարում Կորիատովիչ եղբայրներն այնտեղ սկսել էին ամրություններ կառուցել, ուստի և հայերը տեղափոխվում են Կամենից: Սակայն հայտնի չէ, թե ե՞րբ է դա տեղի ունեցել և արդյոք բոլոր հայերն են հեռացել այդ գյուղերից, թե ոչ: Եթե Արմյանե և Արմյանկի անունները դարեր շարունակ մնացել են այդ գյուղերի վրա, ուրեմն հայերը բավական երկար են ապրել այնտեղ: Գրավոր հնագույն տեղեկությունն այդ գյուղերի վերաբերյալ գալիս է 1493 թ.: Այդ ժամանակ կազմված ցուցակների համաձայն Արմյանե գյուղում եղել է ընդամենը 10 տուն¹³: XVI դարի կեսերին այդ գյուղը պատկանելիս է եղել Ռադեցկիներին: Հաջորդ դարի սկզբներին Մարտին Ռադեցկին Արմյանեն նվիրել է Կամենիցի ճիզվիտներին՝ նրա եկամուտներով շվախտիչների երեխաների համար իրենց վանքին կից բացված դպրոցը պահելու համար: Ծիզվիտական օրդենի վերացումից հետո (1773 թ.) գյուղը վաճառվում է մասնավոր անձանց¹⁴: Այդ գյուղերի հիմնադրման ժամանակի և, ընդհանրապես, նրանց պատմության հետ կապված հարցերը հնարավոր կլինի պարզել հնագիտական պեղումների շնորհիվ, որոնք վաղ թե ուշ պետք է կատարվեն պոդոլյան հինավուրց այդ բնակավայրերում:

2. ԿՈՒՐԱՉԻՎՅԻ

Պոդոլյան այս փոքրիկ բնակավայրը գտնվում էր Կամենեց-Պոդոլսկի շրջակայքում և հայերն այնտեղ անցել են հավանորեն Կամենիցից¹⁵: Ինչպես այլ վայրերում, այնպես էլ Կուբաչիվցիում հայերին թույլատրվել է գնել կամ կառուցել տներ, ղբաղվել արհեստներով ու առևտրով: Սակայն պետք է կարծել, որ այդ գյուղական վայրում հայերի հիմնական զբաղմունքը եղել է գյուղատնտեսությունը: Կուբաչիվցիի հայերին 1576 թ. լեհական թագավոր Ստեֆան Բատորիի տված հրովարտակը (որն այժմ պահվում է Լվովի պատմական արխիվում) ժամանակին ծանոթ է եղել Գրոմնիցկուն: Նա գրում է, որ մոտավորապես 1576 թ. հայերը Կուբաչիվցիում ունեցել են փոքրիկ եկեղեցի¹⁶: Նա հենվում է մի փաստաթղթի վրա (Akta grodskie, t. X, էջ 121)¹⁷, որը հիշվում է նաև լեհական եկեղեցական հանրագիտարանում զետեղված լեհահայերին

¹³ Е. Сецникский, Исторические сведения..., էջ 195:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Այդ գյուղի անունը ուկրաիներեն գրվում է «Кубачівці», լեհերեն՝ «Kubaczowec»: Մի ժամանակ գյուղի անունը «Кубачивка» էր: 1945 թ. այն միացվել է Սմոտրիչ գյուղին:

¹⁶ T. Gromnicki, Ormianie w Polsce, ich historia, prawa i przywileje, Warszawa, 1889, էջ 70:

¹⁷ Տա. Դաշկևիչը ճշտորեն նշում է այդ վավերագրի ներկա «հասցեն»՝ «Akta grodskie i ziemskie», t. 10, Lwow, 1884, էջ 121, տե՛ս «Документы на половецком языке XVI в. (Судебные акты Каменец-Подольской армянской общины)», транскрипция, перевод, предисловие, введение, грамматический комментарий и глоссарий Т. Н. Грунина, М., 1967, предисловие Я. Р. Дашкевича, էջ 81:

վերաբերող հոգևածում¹⁸։ Այստեղ կրկնվում է Կուբաշիվցիի հայերի վերաբերյալ Գրոմնիցկու բերած տեղեկությունը։ Լեհահայ հետազոտող Ս. Դոնիգի-գեիչը անձանոթ է այս նյութերին, ուստի նրա կազմած Լեհահայոց եկեղեցիների քարտեզում Կուբաշիվցին բացակայում է¹⁹։ Կուբաշիվցիի հայերի վերաբերյալ թվական տվյալներ մեզ հայտնի չեն, բայց թեկուզ փոքրիկ եկեղեցու առկայությունն այդ գաղութում թույլ է տալիս ասելու, որ հայերն այնքան էլ աննշան թիվ չեն կազմել այնտեղ և ի վիճակի են եղել հոգալու եկեղեցու կառուցման ու հոգևորական պահելու ծախսերը։ Կուբաշիվցիում ապրած հայերի մասին համարյա ոչինչ չկարողացանք գտնել դատական արձանագրություններում։ Միայն Կամենիցի հայկական դատարանի 1566 թ. ապրիլի 28-ին կազմված հայատառ-ղփշաղերեն մի արձանագրության մեջ հիշատակվում է Կուբաշիվցիից Յուրքո անունով մեկը (դա շատ տարածված անուն էր Պոդոլյեի հայերի մեջ), որին կամենիցացի ոսկերիչ Շատբեյի որդի Հովհաննեսը մի գործի կապակցությամբ վկա է համարում²⁰։ Յա. Դաշկևիչը Կուբաշիվցին ընդգրկել է Ուկրաինայի հայ գաղթավայրերի իր ցուցակում և նրան կից տրված քարտեզի վրա նշել այն որպես XVI դարում գոյություն ունեցած գաղութ²¹։ Հարկ է նշել, որ Կուբաշիվցիի հայերի վերաբերյալ Ստեֆան Բատորին 1576 թ. նոյեմբերին արել է մի շարք կարգադրություններ։ Դրանցից մեկը, որ գրված է լատիներեն և պահվում է Լվովի արխիվում²², ուսերեն թարգմանությամբ, մեր տրամադրության տակ է դրել Յա. Դաշկևիչը։ Այդ կարգադրությունը (կամ մանդատը) կազմված է 1576 թ. նոյեմբերի 14-ին և հասցեագրված է Կամենիցի ստարոստա Նիկոլայ Բժեսկուն։ Երևում է, որ Կուբաշիվցին արքայապատկան գյուղ է եղել և մտել է կամենիցյան ստարոստավայության կազմը։ Թագավորին հայտնի է, որ հայերը Կուբաշիվցիում ունեին հին եկեղեցի, որը քանդվել էր։ Նրանք սկսել էին նորոգել այն, բայց ստարոստան արգելք էր հանդիսանում։ Թագավորը հրամայում է չիանգարել հայերին և, ընդհանրապես, չհարուցել նրանց դժգոհությունը։ Ըստ կարգադրության ստարոստան չպետք է խառնվեր հայ եկեղեցու գործերին, և հայերն ազատորեն անց էին կացնելու այնտեղ իրենց ծիսակատարությունները²³։ Այլ տեղեկություններ այդ եկեղեցու և Կուբաշիվցիում հաստատված հայերի մասին մեզ հայտնի չեն։ Ըստ երևույթին եկեղեցին քանդվել է թաթարների կամ թուրքերի հարձակումների ժամանակ, իսկ հայերը հեռացած պետք է լինեն Կամենեց-Պոդոլսկ։

3. ԿՈՒԲԱՇԻՎՑԻ (ԿՈՒԲՈՎ)

Մոգիլյով-Պոդոլսկի Բարի հետ կապող ճանապարհն անցնում էր Դուբրով-վիցա ավանի վրայով²⁴, որտեղ XVII դարում գոյություն ունեի հայկական

¹⁸ „Encyklopedia kościelna“, t. XVIII, Warszawa, 1891, էջ 441։

¹⁹ S. Donigiewicz, Mapa kościoła ormiańsko-katolickiego w Polsce (od XIII do XX w.). Cz. Lechicki, Kościoł ormiański w Polsce (zarys historyczny), Lwów, 1928.

²⁰ Т. Н. Грунин. Документы на половецком языке, էջ 331։

²¹ Я. Р. Дашкевич, Розселення вірменів..., էջ 165, 179։

²² ЦГИА УССР во Львові, фонд 9, оп. 1, т. 336, էջ 980—981։

²³ Նույն տեղում։

²⁴ Այժմ գտնվում է Ուկր. ՍՍՀ Վիննիցայի մարզի Բարի շրջանում։ Ուկրաիններեն գրվում է «Дубровиця»։

մի փոքրիկ գաղութի: Դնեստրի վտակ Լյադովա գետի ափին կառուցված այս բնակավայրի հայ բնակչության վերաբերյալ պահպանված հնագույն և առաջիմ միակ վավերագիրը Սիգիզմունդ III թագավորի 1615 թ. մարտի 21-ի հրովարտակն է, որով հայերին թույլ է տրվում հաստատվել այդ վայրում, ունենալ սեփական տներ, ազատորեն զբաղվել առևտրով ու արհեստներով: Այդ հրովարտակը ղեկավարված է վ. Պոբուգ-Գուրսկու գրքում²⁵: Նրանից տեղեկանում ենք, որ Դուբրովիցային տրված է եղել Մագդեբուրգյան իրավունք, թույլ է տրվել այնտեղ տարեկան անցկացնել երկու տոնավաճառ: Բնակիչները քսան տարով ազատված են եղել հարկերից, իրավունք են ունեցել պատրաստելու գարեջուր և օղի²⁶: Նմանօրինակ արտոնություններ տրվում էին սովորաբար որևէ առիթով չափազանց տուժած, ամայացած կամ նոր կառուցվող բնակավայրերին: Դուբրովիցան նոր էր կառուցվում և թագավորական հրովարտակը, որ տրված էր հետման Ստանիսլավ Ժուկովսկու խնդրանքով, շլյախտիչ Ստանիսլավ Տրեբուխովսկուն թույլ էր տալիս հիմնադրել քաղաքը: Ս. Բարոնչը, որը համառոտ ձևով գրել է նաև Դուբրովիցայում հաստատված հայերի մասին, հենվում է այս հրովարտակի վրա և ավելացնում, որ այդ վայրում հայերը նշանակալի թիվ չեն կազմել²⁷: Յա. Դաշկևիչի քարտեզում Դուբրովիցան նշված է որպես XVII դարի գաղութ, որը չի ունեցել իր ինքնավարությունը²⁸: Դուբրովիցան հիմնահատակ ավերվել է թուրքերի հարձակման ժամանակ (1672 թ.): Նրանց հեռանալուց հետո (1699 թ.) այդ տեղանքում հիմնադրվում է մի նոր ավան, որին տրվում է Բարոկ անունը²⁹:

4. ՍՏՈՒԿԵՆԻՅԱ

Այնտեղ, որտեղ Ստուդենիցա փոքրիկ գետակը խառնվում է Դնեստրին, հնագույն ժամանակներից ի վեր գոյություն է ունեցել մի փոքրիկ բնակավայր, որը կրում էր նույն գետակի՝ Ստուդենիցայի անունը³⁰: Ուկրաինական այդ գյուղը դարերի պատմություն ունի. առաջին գրավոր տեղեկությունները նրա վերաբերյալ գալիս են 1388 թ.³¹: Ստուդենիցան պոդոլյան այն բնակավայրերից է, որոնց բնակիչները, չհաշտվելով լեհական տիրապետության հետ, հաճախ զենքի են դիմել: Այդ ապստամբությունների ժամանակ ավերվել ու երբեմն ամայացել է Ստուդենիցան, բնակիչները հարկադրված են եղել հեռանալ իրենց գյուղից: Քանիցս Ստուդենիցան քանդվել ու հրկիզվել է նաև թուրքական հարձակումների ժամանակ, բայց Օ. Ս. Կոմպանի խոսքերով «որպես կազակական փյունիկ»³² կրկին բարձրացել է մոխիրների միջից և կյանքը շարունակել է հարատևել երեք կողմերից լեռներով շրջապատված, Դնեստրի գեղեցիկ հովտում, մրգատու ծառերի մեջ թաղված այդ ավանում:

²⁵ Wł. P. Górski, Powiat Mohylowski w gubernii Podolskiej, Krakow, 1902, էջ 58—61:

²⁶ Նույն տեղում:

²⁷ S. Barącz, նշվ. աշխ., էջ 76:

²⁸ Я. Р. Дашкевич, Розселення вірменів..., էջ 159:

²⁹ Wł. P. Górski, նշվ. աշխ., էջ 57—58:

³⁰ Ուկրաիներեն գրվում է «Студенця», լեհերեն՝ «Studzienica»: Այժմ գյուղական բնակավայր է Ուկր. ՍՍՀ Խմելնիցկու մարզի Կամենեց-Պոդոլսկի շրջանում:

³¹ «Історія міст і сіл УРСР. Хмельницька обл.», էջ 363:

³² О. С. Компан, Міста України в другій половині XVII ст., Київ, էջ 136:

Ստուգենիցայում հաստատված հայերին ևս բաժին է հասել այդ փորձություններից և նրանք կիսել են իրենց ուկրաինացի բարեկամների ճակատագիրը: 1633 թ. թուրքական ենիչերիները ավերել են նաև հայերի տները, թալանել ու նրանցից ոմանց գերեվարել: Հայերը կրկին վերադարձել են, վերականգնել իրենց տները և ապրել այդ ավանում մինչև 1770 թ., երբ Պոդոլյան երկրում մոլեզնոդ ժանտախտի համաճարակը հասնում է նաև Ստուգենիցա, ոչնչացնում նրա բոլոր բնակիչներին, այդ թվում և հայ գաղթականներին:

Ստուգենիցայի հայ համայնքի պատմության ուսումնասիրությունը կապված է մի շարք դժվարությունների հետ: Չնայած գաղութն օգտվել է ինքնավարության իրավունքից, ունեցել է իր դատարանը, բայց նրանից փաստաթղթեր չեն պահպանվել: Մյուս կողմից, պատշաճ ուշադրություն չի դարձվում հինավուրց այդ բնակավայրի պատմությանը և Ուկրաինայի քաղաքների ու գյուղերի պատմության բազմահատորյակում Ստուգենիցային առանձին հոդված չի նվիրված: Նրա մասին մի քանի խոսք է ասվում միայն հարևան Տերեմցի գյուղի կապակցությամբ³³, Ստուգենիցայի հայկական գաղութի վերաբերյալ որոշ նյութեր այնուամենայնիվ պահպանվել են և հենվելով դրանց վրա, մի քանի հեղինակներ (Վ. Մաբլինսկին, Լ. Յու.-Ռոլեն, Մ. Բալինսկին ու Տ. Լիպինսկին, Կ. Մելնիկը, Ս. Բարոնը և Յա. Դաշկևիչը) դրել են նաև այդ բնակավայրի ու այնտեղ հաստատված հայերի մասին: Հատկապես ուշադրավ տեղեկություններ կան Ռոլենի «Սահմանամերձ ավանի ճակատագիրը» ակնարկում, որն ամբողջովին նվիրված է Ստուգենիցային³⁴:

Ստուգենիցայի հայ գաղութի սկզբնավորման մասին տեղեկություններ չկան. մեզ հայտնի չէ, թե ե՞րբ և որտեղից են հայերը գաղթել այնտեղ: Կարելի է ենթադրել, որ նրանք եկած պետք է լինեն Ուկրաինայի զանազան հայաշատ վայրերից, ինչպես և հարևան Մոլդավիայից ու Ղրիմից: Հայերի զբաղմունքը Ստուգենիցայում նույնն էր, ինչ Պոդոլյան երկրի այլ վայրերում. նրանք պարապում էին առևտրով ու արհեստներով: Դրա համար Ստուգենիցայում կային բոլոր անհրաժեշտ պայմանները: Այնտեղ տարեկան լինում էր երեք տոնավաճառ, որոնցից մեկը չորս շաբաթ տևողությամբ, մյուսները՝ երկուս³⁵:

Արևելքի հետ առևտուրը գտնվում էր հայերի ձեռքում: Ռոլեն գրում է, որ Ստուգենիցայից արևելյան երկրներ մեկնած վաճառականները սովորաբար վերադառնում էին մայիսին և սեպտեմբերին: Երբ բազմաթիվ ապրանքներով բարձրած ուղտերի քարավանը մտնում էր Ստուգենիցա, ավանի ողջ բնակչությունը, ինչպես և հարևան գյուղերից եկածները դուրս էին գալիս դիմավորելու: Այնուհետև սկսվում էր աշխույժ առևտուրը³⁶: Ստուգենիցային մեծ եկամուտներ էր բերում նաև մերձակա վայրերի, ինչպես նաև Բարի, Վիննիցայի, Շարգորոդի, Սուլավայի և Չերնովիցիի հետ կատարվող առևտուրը³⁷: Ստուգենիցայից արտահանվող ապրանքների մեջ կարևոր տեղ

³³ «Історія міст і сіл УРСР. Хмельницька обл.», т. 2 363.

³⁴ Dr. Antoni J., Losy kresowego miasteczka, „Nowe opowiadania historyczne”, Lwów, 1878, էջ 85—113.

³⁵ W. Marczyński, Statystyczne, topograficzne i historyczne opisanie gubernii Podolskiej, t. 1, Wilno, 1820, էջ 270.

³⁶ Dr. Antoni J., նշվ. աշխ., էջ 100.

³⁷ նույն տեղում:

է գրավել շորացրած միրգը: Այդ ավանը շատ հայտնի էր իր մրգատու ալդիներով: Կ. Մելնիկը դրում է, որ այդ պատճառով Ստուդենիցյան կարող էր կոչվել ողջ Պոդոլյեի մրգատու ալդին: Այստեղից շորացրած միրգը տեղափոխվում էր Հարավային Ռուսիայի բոլոր կենտրոնները³⁸: Հայերը ևս, անկասկած, զբաղվում էին այգեգործությամբ ու մրգի առևտրով:

Ստուդենիցյան լավ ամրացված և մարդաշատ բնակավայր էր. նա շրջապատված էր քարե ամուր պարիսպներով և ուներ երկու դարպաս, որոնցից մեկը կոչվում էր Ռուսական դարպաս (այսինքն՝ Ուկրաինական), մյուսը՝ Հայկական³⁹: Վերջինս հավանորեն այդպես է կոչվել հայերի կողմից կառուցված լինելու պատճառով կամ էլ հարձակումների ժամանակ այդ դարպասի պաշտպանությունը վստահված է եղել հայերին: Հայկական եկեղեցին գտնվելիս է եղել Ստուդենիցյայի կենտրոնական հրապարակում, ռատուշայի շենքից ոչ այնքան հեռու: Ըստ երևույթին դա փոքրիկ եկեղեցի էր, այլապես Ռուլեն, որ գրել է նրա մասին, չէր օգտագործի «kościółek» բառը⁴⁰:

XVII դարի 30-ական թթ. քաղաքը պատկանում էր բրադլավյան վոյեվոդա Ստանիսլավ Պոտոցկուն, որը հայտնի էր հայերի նկատմամբ ունեցած իր բարյացակամ վերաբերմունքով: Ս. Պոտոցկու կամ նրա նախորդների օրոք Ստուդենիցյայի հայերը ստացել են ինքնավարության իրավունք: Տեղեկություններ կան Ստուդենիցյայի հայ վոյթի մասին, որը մեծահարուստ անձնավորություն էր և մեծ հեղինակություն էր վայելում քաղաքում⁴¹:

Ստուդենիցյայում հաստատված հայերի քանակի մասին ոչինչ հայտնի չէ, բայց միայն այն փաստը, որ հայերն ունեցել են իրենց առանձին ինքնավարությունը և եկեղեցին, վկայում է գաղութի բազմամարդության մասին: Ստուդենիցյայի հայերի վերաբերյալ տեղեկությունները Ռուլեն քաղել է ոմն Ռապտոլաժի ձեռագիր աշխատությունից⁴², որը պարունակում է XVII և XVIII դդ. նամակներ և չհրապարակված ձեռագրեր: Այս փաստաթղթերի մեջ ուշադրավ տեղեկություն կա Ստուդենիցյայի վրա կատարված թուրքական մի հարձակման մասին, որի ժամանակ, ի թիվս այլ անձանց, գերի է տարվում նաև Ստուդենիցյայի հայ վոյթի միակ դուստր Հռիփսիմեն: Այս հարձակումը տեղի է ունեցել 1633 թ. հոկտեմբերին, երբ Աբազա փաշան 50000 զորքով արշավում է Կամենիցի վրա և անհաջողության հանդիպելով, նահանջի ճանապարհին պաշարում է Ստուդենիցյան: Քաղաքը պաշտպանում էին միայն բնակիչները, որոնք երեք օր շարունակ կարողանում են ետ մղել թշնամուն: Բայց թուրքերն ի վերջո գրավում են քաղաքը, մեծ ավերածություններ անում այնտեղ, հրկիզում տները և հարյուրավոր գերիներ վերցրած հեռանում⁴³: Հայերն էլ, անշուշտ, ակտիվորեն մասնակցել են քաղաքի պաշտպանությանը և նրանց էլ բաժին է հասել գրավումից հետո անխուսափելի հաշվեհարդարից: Հավանորեն այս ժամանակ էլ գերի է ընկել Հռիփսիմեն:

³⁸ К. М[ельник]. Путевые очерки Подолия. «Киевская старина», 1885, декабрь, № 80.

³⁹ Dr. Antoni J., նշվ. աշխ., էջ 98:

⁴⁰ Նույն տեղում, էջ 97:

⁴¹ Նույն տեղում, էջ 104:

⁴² Նույն տեղում, էջ 104—107:

⁴³ M. Bałinski, T. Lipinski, նշվ. աշխ., էջ 139:

1635 թ. լեհական սեյմը, նշելով Ստուդենիցայի բնակիչների հերոսական պաշտպանությունը, Տ տարով ազատում է նրանց բոլոր կարգի հարկերից ու պարտավորություններից: Մի շարք արտոնություններ է տալիս նրանց նաև քաղաքի տերը՝ իշխան Պոտոցկին: Ստուդենիցյան սկսում է վերականգնվել: Վերադառնում են փախածները, գալիս են նոր բնակիչներ: Այնտեղ հաստատվում են հայ, հույն և ռումինացի վաճառականներ⁴⁴: Լեհ գիտնականներ Մ. Բալինսկին ու Տ. Լիպինսկին և սրանց հետևելով Ս. Բարոնշն ու Կ. Մելնիկը Ստուդենիցայում հայերի հաստատվելը կապում են այս թվականի հետ, սակայն, ինչպես տեսանք, հայերը Ստուդենիցայում ապրում էին ավելի վաղ ժամանակներից սկսած: Կ. Մելնիկը գրում է, որ այդ նորիկ վաճառականները Ստուդենիցայի կենտրոնում կառուցում են երկհարկանի, արևելյան ոճի քարե տներ՝ խանութներով ու ներքնահարկերով, ինչպիսին դեռևս պահպանվել էին Կամենիցում, Մոգիլյովում և պոդոլյան այլ քաղաքներում, որտեղ գոյություն են ունեցել արևելյան վաճառականների գաղութներ⁴⁵:

Մինչև ե՞րբ է Ստուդենիցայում գոյատևել հայ գաղութը: Մարչինսկին⁴⁶ և նրան հետևելով Յա. Դաշկևիչը⁴⁷ գրում են, որ այն գոյություն է ունեցել մինչև 1700 թ. համաճարակը, որի ժամանակ մահացել են նաև այնտեղ եղած հայերը: Օ. Ս. Կոմպանը այդ համաճարակի թվականը համարում է 1699-ը⁴⁸, 1700 թ. կամ 1699 թ. Ստուդենիցայում տեղի ունեցած համաճարակի վերաբերյալ տեղեկություններ չկան: Մի շարք հեղինակներ այդ համաճարակի թվականը համարում են 1770-ը: Մ. Բալինսկին և Տ. Լիպինսկին գրում են, որ 1770 թ. ժանտախտի համաճարակը կոտորել է Ստուդենիցայի բնակիչների մեծամասնությանը՝ մի բան, որ դարձել է այդ բնակավայրի անկման պատճառներից մեկը⁴⁹: Կ. Մելնիկը ևս կարծում է, թե 1770 թ. համաճարակը, որ ամառային սփռեց ողջ Պոդոլյեում, «այցելեց նաև Ստուդենիցա ու ոչնչացրեց նրա բնակչության նշանակալի մասը: Բնակավայրն անկում ապրեց»⁵⁰: Արևելյան վաճառականների մի մասը ոչնչացավ ժանտախտից, մյուսները լքեցին բնակավայրը, դրա հետևանքով խոշոր առևտուրն սկսեց անհետանալ և փոխարինվեց մանր գործարքներով:

1770 թ. ժանտախտը, որը տևել է շուրջ կես տարի և մեծ քանակությամբ մարդկային զոհեր խլել պոդոլյան բնակավայրերից և հատկապես Կամենիցից, ինչպես երևում է, վերջ է տվել նաև Ստուդենիցայի հալությանը:

5. ԲԱՐ

Վիեննիցայից հարավ-արևմուտք, Հարավային Բուգի վտակ Ռոմ գետի ափին գտնվող ուկրաինական այս փոքրիկ քաղաքի⁵¹ հայ գաղութը գոյատևել

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ К. Мельник, նշվ. աշխ., էջ 83:

⁴⁶ W. Marcziński, նշվ. աշխ., էջ 269:

⁴⁷ Я. Р. Дашкевич, Розселення вірменів..., էջ 173:

⁴⁸ О. С. Компан, նշվ. աշխ., էջ 136:

⁴⁹ М. Balinski, Т. Lipinski, նշվ. աշխ., էջ 136:

⁵⁰ К. Мельник, նշվ. աշխ., էջ 86:

⁵¹ Այժմ շրջանային կենտրոն է Ուկր. ՍՍՀ Վիեննիցայի մարզում: «Կամենիցյան տարեգրություններում» Բարը հանդիպում է «Պար» ձևով (Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896. էջ 18, 62): Ուկրաիներեն գրվում է «Бар», լեհերեն՝ «Bar»:

է XVI դարի 40-ական թթ. մինչև XVII դարի առաջին քառորդը⁵²։ Բարը Կամենիցից հետո ամենակարևոր ամրացված վայրն էր լեհական պետության հարավ-արևելյան ծայրամասում և զգալի դեր է խաղացել Պոդոլյան երկրի քաղաքական կյանքում⁵³։ Երավոր առաջին տեղեկությունները նրա մասին վերաբերում են 1425 թ.։ Բարն այն ժամանակ կոչվում էր Ռով և գտնվում էր համանուն գետի աջ ափին⁵⁴։ Ուկրաինացի պատմաբան Դ. Ի. Միշկոն գրում է, որ հայերը Քարում հաստատվել են XV դարում⁵⁵, սակայն դա պատշաճ ձևով չի հիմնավորել։ Նա նշում է միայն Ժ. Բարոնչի աշխատությունը, որի մեջ XV դարում Բարում հայերի հաստատվելու վերաբերյալ ոչ մի խոսք չկա⁵⁶։ XV դարում այդ բնակավայրում ստեղծված պայմանները միանգամայն աննպաստ էին հայ գաղթի առաջացման համար։ Ռովը, որ այն ժամանակ մի փոքրիկ ավան էր, անընդհատ ենթարկվում էր թուրքերի ու թաթարների հարձակումներին։ 1452 թ. թաթարներն այրում են քաղաքը և քանդում նրա ամրոցը։ 1528 թ. նրանք կրկին ավերում են ամրոցը, և Ռովի բնակիչները հարկադրված են լինում հեռանալ այնտեղից։ 1537 թ. Ռովը՝ հինգ ավանների և 37 գյուղերի հետ միասին լեհաստանի թագավոր Սիգիզմունդ I-ը նվիրում է իր կնոջը՝ ադգությամբ իտալուհի Բոնա Սֆորցա թագուհուն։ Հրաման է տրվում վերականգնելու քաղաքը և կառուցելու ամրոցը։ Այդ նոր քաղաքը շինվում է Ռովի ձախ ափին։ Ի հիշատակ իր ծննդավայրի՝ իտալական Բարի քաղաքի, թագուհին այն կոչում է Բար անունով⁵⁷։ Դրանից հետո միջոցներ են ձեռք առնվում քաղաքը բնակեցնելու ուղղությամբ։ Թագավորը Բարում հաստատվածներին հինգ տարով ազատում է բոլոր հարկերից, թույլ է տալիս առևտուր անել և տարեկան երեք անգամ տոնավաճառ կազմակերպել։ Ուկրաինական բնակչությունը, որ թաթարների արշավանքի պատճառով քաղաքից փախել էր շրջակա գյուղերը, վերադառնում է Բար։ Քաղաք վերադարձածները վեց տարով, իսկ նոր եկածները՝ տասներկու տարով ազատվում են բոլոր հարկերից⁵⁸։ Այս ժամանակ էլ, ահա, Բարում հաստատվում են մի քանի հայ ընտանիքներ⁵⁹։ Նրանք զբաղվում էին արհեստներով, մասնակցում տոնավաճառներին։ 1540 թ. Բոնա թագուհին հայերին տասներկու տարով ազատում է հարկերից և մաքսային վճարումներից⁶⁰։ Այս արտոնություններն, անտարակույս, նպաստում են հայերի Բար տեղափոխվելուն։ Դժբախտաբար, տեղեկություններ չկան Բարի հայերի քանակական կազմի վերաբերյալ։

Բարի տնտեսությանը մեծամեծ օգուտներ էր տալիս Արևելքի հետ կատարվող առևտուրը։ Վ. Պ. Գուրսկին նշում է, որ XVI դարի երկրորդ կեսը և XVII դարի առաջին քառորդը վերելքի տարիներ էին այս քաղաքի համար։ Բար էին

⁵² Я. Р. Дашкевич. Розселення вірменів..., էջ 156։

⁵³ Е. Сецинский, Храмы города Бари Могилевского уезда, исторический очерк, Каменец-Подольск. 1903, էջ 1։

⁵⁴ «Історія міст і сіл Української РСР. Вінницька область», Київ, 1972, էջ 113։

⁵⁵ Д. И. Мышко, Жизнь армян в Подолли в XIV—XVII вв., «Історические связи и дружба украинского и армянского народов», вып. III, Ереван, 1971, էջ 190։

⁵⁶ S. Bagdasz, նշվ. աշխ., էջ 76։

⁵⁷ «Історія міст і сіл УРСР. Вінницька область», էջ 114։

⁵⁸ В. К. Гудьман, Памятники старины в Подолли, Каменец-Подольский, 1901, էջ 114։

⁵⁹ S. Bagdasz, նշվ. աշխ., էջ 76։

⁶⁰ О. С. Компан, նշվ. աշխ., էջ 63, 77։

գալիս մեծ թվով հայ, հույն, ռումին և հրեա վաճառականներ⁶¹։ Արևելքից բերված ապրանքներից էին՝ շալեր, զորգեր, ձիերի հանդերձանք, դամասկոսյան սրեր, հունական և ռումինական զինքներ, օծանելիք, չորացրած միրգ, օճառ և այլն։ Թվարկելով այս ապրանքները, որոնց ներմուծման գործում ղեկավար է եղել, անպայման, Բարի հայ առևտրականների դերը, Ա. Յու.-Ռոլլեն նշում է, որ այդ առևտրին աշխույժ մասնակցություն էին ունենում Կամենիցի հայ վաճառականները⁶²։ Բարում կազմակերպված տոնավաճառներին մասնակցել են նաև Հայաստանից, Հունաստանից և Վալախիայից եկած հայ վաճառականներ⁶³։

Դ. Ի. Միշկոն գրում է, որ Բարում «հայերին իրավունք է տրվում համայնքի ժողովում լուծել իրենց կարևոր հարցերը։ Նրանք ունեն համայնքի ավագը, որին ենթարկվում էին և կատարում նրա բոլոր կարգադրությունները»⁶⁴։ Հեղինակի նշած միակ աղբյուրը Ս. Բարոնշի «Ուրվագիծ հայոց պատմության» գիրքն է, որի մեջ, սակայն, Բարի հայերի այդօրինակ ինքնավարությունն ունենալու մասին ոչինչ չի ասվում⁶⁵։ Չհիմնավորված այս ենթադրության հեղինակը Դ. Ի. Միշկոն չէ։ Դեռևս 1894 թ. ուկրաինացի գիտնական Ի. Ա. Լիննիչենկոն գրել է հետևյալը. «Կիևի կենտրոնական դիվանում, որչափ մեղ հայտնի է, պահվում են Կամենեց-Պոդոլսկի հայոց դատավարության զբաղված (հայոց լեզվով)։ Այս դիվանից Բար քաղաքի հայոց զբաղված վերադարձրած են Բար»⁶⁶։ Կարելի է, արդյոք, եզրակացնել, որ Բար տարված զբաղված անպայման եղել են դատական արձանագրություններ, հետևապես և այնտեղի հայերն ունեցել են ինքնավարության իրենց մարմինը։ Քանի որ խնդրո առարկա զբաղված ոչ ոք չի կարգացել և դրանք դեռևս հայտնաբերված չեն, ուստի այդ մասին առայժմ որոշակի ոչինչ ասել չի կարելի, բայց մի բան անվիճելի է, որ Մագդեբուրգյան իրավունք ստացած այդ քաղաքում տասնամյակներ զոյություն ունեցած հայկական համայնքն, անշուշտ, ինչ-որ ձևով կարգավորել է իր ներքին գործերը, ունեցել է իր ղեկավարը։ Բարում հաստատված հայերը «շատ չէին, նրանք չունեին նույնիսկ իրենց սեփական եկեղեցին ու քահանան»⁶⁷։ Այնպես որ, դատարանի վերաբերյալ ենթադրությունը, ինչպես նշում է Յա. Դաշկևիչը, հիմնավորված չէ⁶⁸։

Սխալ է Դ. Ի. Միշկոյի ենթադրությունն այն մասին, որ իբրև հայերը Բարում մնացել են մինչև XVII դարի 70-ական թթ. և հետոցն են այնտեղից 1672—1676 թթ. թուրքական ագրեսիայի պատճառով⁶⁹։ Հայերը Բարից հեռացել կամ գերի են տարվել այդ իրադարձություններից դեռ շատ առաջ՝ XVII դարի առաջին կեսում։ Հայտնի է, որ լեհական տիրապետության տակ եղող Բարի բնակիչները մշտապես ձգտում էին ազատվել օտար տիրապետությունից։ Նրանք մասնակցել են Ս. Նալիվաչկոյի ապստամբությանը, բայց

⁶¹ S. Barącz, նշվ. աշխ., էջ 76։

⁶² Dr. Antoni J. Zameczki Podolskie..., էջ 122։

⁶³ նույն տեղում։

⁶⁴ Д. И. Мищенко, նշվ. աշխ., էջ 190։

⁶⁵ S. Barącz, նշվ. աշխ., էջ 76։

⁶⁶ Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի և Արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 21։

⁶⁷ S. Barącz, նշվ. աշխ., էջ 76։

⁶⁸ Я. Р. Дапкевич, Поселения бирмен..., էջ 156։

⁶⁹ Д. И. Мищенко, նշվ. աշխ., էջ 191։

պարտություն են կրել: 1648 թ. բարցիները կրկին ապստամբում են և քաղաքից վոնդում կայազորի պետ Բրոնեակուն: Օգնության խնդրանքով նրանք գիւմում են Բոգդան հմելնիցկուն: Վերջինս Բար է ուղարկում Մ. Կրիվոնոսին: Նույն թվականի օգոստոսի սկզբներին Կրիվոնոսի ջոկատը մտնում է Բար և գրավում ամրոցը: Կոտորվում են բոլոր շլյախտիչները, կաթոլիկներն ու հրեաները: Դրանից հետո երկար տարիներ Բարը և նրա շրջակայքը դառնում են արյունոտ ընդհարումների թատերաբեմ: Քաղաքը ձեռքից ձեռք էր անցնում⁷⁰: 1649 թ. Բարի վրա հարձակվում են Ղրիմի թաթարները Իսլամ-Գիրեյ խանի զլխավորությամբ: «Եւ ետ այն[որի]կ Ըսլամքէրէյ խանն բազում զօրօք գընաց [ի] վերայ Գոռելին⁷¹, — գրում է հաշատուր Կաֆայեցին, — և բազում յաշխարհ տապալեցաւ Հայոց և մտաւ ի Պար քաղաքն: Քաղքին տէրն Բոթոսկին իւր որդովն և իւր վազիրովն, իւր իշխանօքն ըսպոեցաւ և բերին գերի ի իւրիմ և ածին բանդ և երկաթի կապանօք կապեցին և կըտրեցին գին բազում դահեկան, ի քաղաքըն Ղալայ ի բերթն հրէից: Եւ ետոյ այլ ասքէր խրկեց խանն քան զառաջինն, որ բազում աւերք արարին, տապալեցին բազում գիւղ և քաղաք և գերեցին զամենեւեան առհասարակ, ո՞վ կարէ պատմել զաղէտն, որ եղաւ, Գոռելաց տուն աւիրեցաւ»⁷²:

Ժամանակակից հեղինակի արժեքավոր վկայությունից երևում է, որ Իսլամ-Գիրեյի հրոսակները մեծամեծ ավերներ են հասցրել նաև մոտակա հայաշատ վայրերին, իսկ Բարը ենթարկվել է ահավոր թալանի և ավերման, բնակիչներից շատերը գերի են տարվել ու վաճառվել Ղրիմի շուկաներում:

1651 թ. մարտին լեհները կրկին գրավում են Բարը: Նույն թվականին Բոգդան հմելնիցկին Կամենիցից Զբարժա արշավելիս մտնում է Բար և այն «վեր է ածում մոխրակույտի»⁷³: Այնպես որ, հայկական համայնքը վաղուց արդեն դադարել էր գոյություն ունենալուց, երբ 1672 թ. Բարն ընկավ թուրքական տիրապետության տակ:

6. ՈՒՄԱՆ

Ումանը Պոդոլյեի աշխարհագրական տարածքի մեջ մտնող ամենաարևելյան բնակավայրերից է: Ժամանակին այն Բրացլավի վոյեվոդության, հետո՝ Կիևի նահանգի կազմի մեջ էր⁷⁴: Պատմական վավերագրերում Ումանը առաջին անգամ հիշատակվում է XV դարում⁷⁵: XVII դարում Ումանը Բրացլավի վոյեվոդության ամենանշանավոր քաղաքներից էր, նրա բնակչության թիվը հասնում էր 9600 հոգու⁷⁶:

⁷⁰ В. К. Гульдман, *նշվ. աշխ.*, էջ 115:

⁷¹ Պատմաբան Վ. Միքայելյանը ճշտորեն կռահել է, որ հայ ժամանակագիրը «Գոռել» գրելով նկատի ուներ լեհաստանի թագավորությունը (տե՛ս Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղթի պատմությունը, Երևան, 1964, էջ 140):

⁷² «Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ.», հատ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 225:

⁷³ В. К. Гульдман, *նշվ. աշխ.*, էջ 115:

⁷⁴ Ումանն ըստ մարզային ենթակայության քաղաք է Ուկր. ՍՍՀ Չերկասկի մարզում: Ուկրաինեները գրվում է «Умань», լեհերեն՝ «Пумань»:

⁷⁵ Х. П. Яценужникий, Город Умань, краткий исторический очерк, Умань, 1913, էջ 7:

⁷⁶ О. С. Компан, *նշվ. աշխ.*, էջ 77:

Ումանում հայերի առկայության մասին հնագույն հիշատակությունը վերաբերում է 1649 թ.։ Ումանի կազակների թվում այդ ժամանակ հիշվում են նաև մի շարք հայեր⁷⁷։ Ռուսական դեսպանը, որը 1653 թ. աշնանն անցել է Ումանի վրայով, գրում է, թե Ղրիմից, Օչակովից և այլ վայրերից առևտուր անելու համար Ուման են գալիս թաթարներ ու հայեր, և որ նրանք այնտեղ իրենց ապրանքների համար ունեն համապատասխան պահեստներ ու խանութներ⁷⁸։ Սակայն հայերը Ումանում ոչ միայն խանութներ ունեին, այլև սեփական տներ, հետևապես նրանք արդեն դարձել էին Ումանի մշտական բնակիչները։ Այդ մասին արժեքավոր վկայություն է թողել Ուկրաինայում ճանապարհորդած արաբ ուղեգիր Պավել Հալեպցին, որը 1654 թ. եղել է Ումանում։ Նա գրում է, որ Ումանը «կազակների երկրի առաջին մեծ քաղաքն է, նրա տները բարձր են և գեղեցիկ, նրանց մեծ մասը պատկանում է լեհերին, հրեաներին ու հայերին»⁷⁹։

1657 թ. Ուման այցելած էվլիա Չելեբին այդ քաղաքի տների մասին գրում է, որ նրանք երկհարկանի էին, ունեին վառարաններ և ծածկված էին կավարով (բաղդադիով) կամ բարակ տախտակներով։ Իր սովորության համաձայն Չելեբին իրիստ շափազանցված տվյալներ է բերում տների, եկեղեցիների, խանութների, ինչպես և Ումանում գտնվող զորքերի քանակի մասին⁸⁰։

Ումանը առևտրական նշանավոր կենտրոն էր, և հայերը ակտիվորեն մասնակցում էին առևտրին⁸¹։ Ուկրաինացի պատմաբան Ֆ. Շևչենկոն, որ ուսումնասիրել է ուկրաինական կազակական միավորումների մեջ հայ կազակների առկայության հարցը, նշում է, որ Ումանի կազակների մեջ եղել են նաև հայեր. նա բերում է դրանց անունները՝ Մակար Օրմենենկո, Վասիլի Սարաջին, Բվան Օրուչիյանենկո և Սիմյոն Ուրգիյանենկո։ Վերջինս 1654 թ. դարձել է գնդապետ⁸²։ Ուկրաինական կազակները դարեր շարունակ կարևոր ուժ էին տիրող վերնախավի դեմ պայքարելու և երկիրը օտար նվաճողներից պաշտպանելու գործում։ Հայերի առկայությունը Ումանի և այլ վայրերի կազակային միավորումներում, հայ-ուկրաինական բարեկամության և մարտական համագործակցության դրսևորումներից է։

Հայտնի է, թե հայերը երբ են հաստատվել Ումանում, բայց կարելի է ճշտորեն ասել, թե մինչև երբ են նրանք մնացել այդ քաղաքում։ Ումանը դեռևս 1659 թ. Պերեյասլավի պայմանագրի մեջ հիշվում է որպես Ուկրաինայի լավ ամրացված քաղաքներից մեկը, սակայն այն չի կարողանում դիմանալ 1674 թ. հարձակմանը, երբ Դորոշենկոն թուրքերի օգնությամբ գրա-

⁷⁷ Я. Р. Дашкевич, Розселення вірменів..., էջ 174։

⁷⁸ Ф. П. Шевченко, Армяне в украинском казацком войске в XVII—XVIII вв., «Исторические связи и дружба украинского и армянского народов», сборник материалов украинско-армянской научной сессии, Киев, 1965, էջ 96։

⁷⁹ Павел Алеппский, Путешествие антиохийского патриарха Макария в Россию в пол. XVII века, вып. II, кн. IV, М., 1897, էջ 21։

⁸⁰ Эвлия Челеби, Книга путешествия (Извлечение из сочинения турецкого путешественника XVII века), перевод и комментарии, вып. I, Земли Молдавии и Румынии, М., 1961, էջ 88։

⁸¹ Х. П. Ящуржинский, նշվ. աշխ., էջ 7։

⁸² Ф. П. Шевченко, նշվ. աշխ., էջ 96—97։

վում է Ումանը և կոտորում նրա համարյա բոլոր բնակիչներին: Քաղաքն ամայանում է: 1712 թ. Պետրոս Մեծի կարգադրությամբ մնացած բնակիչներին տեղափոխում են Դնեպրի ձախ ափը⁸³: Շուտով՝ XVIII դարի առաջին կեսին Ումանը նորից վերականգնվում է և բնակեցվում: 1768 թ. Ումանը համարվում էր Ուկրաինայի լավագույն քաղաքներից մեկը: Այնտեղ կրկին հաստատվում են հայեր, որոնք դադարում էին առևտրական ընդարձակ գործարքներով⁸⁴: Սակայն սրանց էլ վիճակված չէր երկար ժամանակ մնալու Ումանում: 1768 թ. Աջափնյա Ուկրաինայում լեհական տիրապետության և ավատատիրական ճնշման դեմ սկսված գյուղացիական-կազակական ապստամբության ժամանակ, որի գլուխն էին անցել Մաքսիմ Ժելեզնյակն ու Իվան Գունտան, Ումանը հայտնվում է այդ արյունահեղ իրադարձությունների կենտրոնում: 1768 թ. հունիսի 19-ին ապստամբները գրավում են Ումանը⁸⁵: Կրկին կոտորածներ են լինում, և քաղաքը նորից ամայանում է: Շատ չանցած Պոտոցկիները, որոնց պատկանում էր Ումանը, կարողանում են վերականգնել քաղաքը, բայց այնտեղ հայեր այլևս չէին մնացել:

7. ՅՈՒՋԵՑԻՐՍԿԻ (ԲԱՒՏԱ)

Հարավային Բուգի վտակ Կոդիմա գետի ափերին տարածված այս փոքրիկ քաղաքը ժամանակին բաղկացած էր երկու մասից, որոնք տարբեր անուններ էին կրում⁸⁶: Կոդիմայի աջ ափին գտնվող մասը կոչվում էր Բալտա, ձախ ափինը՝ Յուզեցիգրադ, բայց երկուսն էլ հայտնի էին մեկ ընդհանուր՝ Բալտա անունով: Կոդիման սահմանային գետ էր. Բալտան գտնվում էր Ղրիմի թաթարների, իսկ հետո՝ թուրքերի տիրապետության տակ, Յուզեցիգրադը՝ լեհերի: Սկզբում հիմնադրվել էր Յուզեցիգրադը (1690—1695) և կոչվել հիմնադրողի՝ լեհ իշխան Յուզեցի Լյուբոմիրսկու անունով: Վերջինս կառուցել էր ամրոց և նրա շուրջը ստեղծել մի փոքրիկ ավան, ուր բնակեցրել էր իր կալվածներից բերված տարբեր ազգությունների պատկանող 3000 անձանց⁸⁷: 1748 թ. Կոդիմայի աջ՝ թուրքերի իշխանության տակ գտնվող ափին հիմնադրվում է Բարտա (հետագայում՝ Բալտա) անունով մի ավան, որի բնակիչները Ռուսաստանից ու լեհաստանից փախած գյուղացիներ էին⁸⁸:

XVII դարի 60-ական թթ. Յուզեցիգրադում հիմնադրվում է հայկական գաղթօջախ, որի անդամները լավ ընդունելության են արժանանում քաղաքի տերերի կողմից: Ստանիսլավ Լյուբոմիրսկին իր միջոցներով հայերի համար կառուցել է տալիս Ս. Ստանիսլավ եկեղեցին⁸⁹ և 1765 թ. սեպտեմբերի

⁸³ «Энциклопедический словарь», т. XXXIV, СГ16, 1902, էջ 721:

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ «Советская Историческая Энциклопедия», т. VII, М., 1965, էջ 479:

⁸⁶ Բալտան այժմ շրջանային կենտրոն է Ուկր. ՍՍՀ Օդեսայի մարզում: Մ. Բժշկյանի գրքում այդ քաղաքի անունը գրված է «Պալդա» (տե՛ս նրա «Ճանապարհորդություն ի Լեհաստան», Վիեննայի, 1830, էջ 84): Ուկրաինեներն գրվում է «Балта», լեհերեն՝ «Bałta»:

⁸⁷ П. Стряпкин, Балта (очерк), Одесса, 1962, էջ 9:

⁸⁸ Նույն տեղում, էջ 11:

⁸⁹ T. Gronicki, նշվ. աշխ., էջ 77: Պ. Մ. Մամիկոնյանի մոտ աշդ եկեղեցու անունը նշված է Ս. Աստվածածին (տե՛ս նրա «Ռումինահայ ներկայի և ապագայի», Կալաթ, 1895, էջ 23), որը ճիշտ չէ: Սկզբից եկեթ այն կրել է Ս. Ստանիսլավ անունը («Encyklopedia kościelna», т. XVII, Warszawa, 1891, էջ 417):

1-ի հրամանագրով, որի բնագիրը հրատարակված է Ս. Բարոնչի գրքում, այդ եկեղեցու քահանայի համար նշանակում ունի՝ 300 զլոտի⁹⁰։

Յուզեֆգրադը սահմանային քաղաք էր, որտեղ լայն հնարավորություններ կային առևտրի ու արհեստների զարգացման համար, բայց միաժամանակ անվերջանալի էին գոտություններն ու զինված ընդհարումները Բալտայի թուրքերի ու թաթարների հետ։ Այդ ընդհարումներից մեկը, ինչպես հայտնի է, նույնիսկ ռուս-թուրքական առաջին պատերազմի առիթ դարձավ⁹¹։

Յուզեֆգրադի բնակիչները, այդ թվում և հայերը, ակտիվորեն մասնակցում էին առևտրին։ Նրանք զբաղվում էին զանազան արհեստներով, ինչպես և հողագործությամբ ու անասնապահությամբ։ Ե. Սեցինսկու ուսումնասիրությունից երևում է, որ Յուզեֆգրադում գոյություն է ունեցել կաշեգործների համաքարություն, որի կանոնադրությունը հաստատվել է Ա. Լյուբոմիրսկու կողմից 1777 թ.⁹²։ Նյութերի պակասը թույլ չի տալիս ասելու, թե դա հայկական համաքարություն էր, թե ոչ։ Մենք գիտենք, որ այդ վայրերում հայերի զբաղմունքներից մեկն էլ կաշվի մշակումն էր, իսկ հայ կաշեգործները սովորաբար համախմբված էին իրենց արհեստակցական կազմակերպությունների մեջ։ Հայտնի չէ նաև այն, թե Յուզեֆգրադի հայերը ունեցե՞լ են արդյոք իրենց առանձին վարչությունը, թե ենթարկվել են քաղաքի մագիստրատին։

Յուզեֆգրադի հայերի քանակի վերաբերյալ միակ տեղեկությունը պահպանվել է Մ. Բժշկյանի գրքում։ Նա գրում է. «Յառաջագոյն կային աստ իբր 30 տունք Հայոց, որք և շինեցին քարաշէն եկեղեցի վայելուչ, և բնակարան ժողովրդապետին»⁹³։ Այդ երեսուն ընտանիքներն ինչ-որ ձևով իրականացրել են իրենց ներքին կառավարման գործը, բայց այդ մասին տեղեկություններ չկան։

Յուզեֆգրադը հաճախակի ենթարկվել է թուրք-թաթարական հրոսակների հարձակումներին։ 1768 թ. թաթարներն անցնում են Կոդիման և ներխուժելով Յուզեֆգրադ, քարուքանդ են անում քաղաքը։ Դրանից հետո անհրաժեշտ է լինում հայ զաղթականների համար կրկին եկեղեցի և քահանայի համար տուն կառուցել⁹⁴։ Երկու տարի անց ժանտախտի համաճարակը տարածվում է նաև Յուզեֆգրադում։ Այնքան մեծ է լինում զոհերի, ինչպես և քաղաքից հեռացածների քանակը, որ Ա. Լյուբոմիրսկին հարկադրված է լինում վերաշինել քաղաքը և նոր արտոնություններ ստանալ բնակիչների համար⁹⁵։ 1776 թ. նոյեմբերի 1-ին Յուզեֆգրադին տրվում է Մագդեբուրգյան իրավունք, այսինքն բնակչությունն ազատվում է ստարոստայի ու վոյեվոդայի իշխանությունից, մի շարք ազատություններ է ստանում և հնարավորություն է ունենում նախաձեռնություն ցուցաբերել տնտեսական կյանքում⁹⁶։

⁹⁰ S. Barącz, նշվ. աշխ., էջ 72—75։

⁹¹ „Słownik geograficzny królestwa Polskiego“, t. 1, Warszawa, 1880, էջ 96։

⁹² E. Сецинский, Материалы для истории цехов в Подолье, Каменец-Подольск, 1904, էջ 444—445։

⁹³ Բժշկյան, էջ 184։

⁹⁴ S. Barącz, նշվ. աշխ., էջ 76։

⁹⁵ В. К. Гульдман, նշվ. աշխ., էջ 113։

⁹⁶ П. Стряпкин, նշվ. աշխ., էջ 11։

Թույլ է տրվում Յուզեֆգրադում տարեկան անցկացնել երկու տոնավաճառ՝ Հետագայում այնտեղ լինում էր վեց տոնավաճառ⁹⁷։

Ա. Լյուբոմիրսկին նյութական օգնություն է ցույց տալիս նաև հայկական եկեղեցու քահանային. նա բարձրացնում է նրա ոռճիկը տարեկան մինչև 1600 զլոտի⁹⁸։ Յուզեֆգրադում այդ ժամանակ (1786 թ.) քահանա էր Լազար Թորոսովիչը⁹⁹։

Ռուս-թուրքական պատերազմից հետո Հարավային Բուգից մինչև Դնեստր ընկած տեղանքը, այդ թվում և Բալտան, անցնում է Ռուսաստանին, իսկ Յուզեֆգրադը Ռուսաստանին միացվեց (1793 թ.)։ Յուզեֆգրադը վերանվանվում է Ելենսկի։ Շատ շանցած Կոդիմայի երկու ափերին գտնվող այդ քաղաքները միացվում են միմյանց և Բալտա ընդհանուր անվան տակ դառնում Պոդոլյե նահանգի գավառային ենթակայության քաղաք¹⁰⁰։

Հայ գաղութն այն ժամանակ դեռևս գոյություն ուներ և գործում էր եկեղեցին։ Մոգիլյով-Պոդոլսկում հայ եպիսկոպոսության ստեղծումից հետո Կամենեց-Պոդոլսկ, Լուցկ և Ռաշկով քաղաքների հայ եկեղեցիների հետ միասին Բալտայի հայկական եկեղեցին սկսում է ենթարկվել Մոգիլյովի Յուզեֆ Քոնյուսովիչի եպիսկոպոսին (1810 թ.)¹⁰¹։ Մ. Բժշկյանը գրում է, որ Բալտայի հայ ժողովրդապետը (քահանան) «մինչև ցայժմ նստի անդ և հովու է զլէ՛՛ ժողովուրդն, զի չիք անդ հայազգի, բայց եթէ ի մօտաւոր զիւղօրէս։ Այս եկեղեցի ունի կալուած յեկամուտ ժողովրդապետին, որ է մի ի նախապատիւ կանոնիկոսաց աթոռոյն Մուլովի»¹⁰²։ Բալտայի հայկական եկեղեցու մասին պահպանված տեղեկություններից հայտնի է, որ 1826 թ. այն օծվել է Լուցկ-Ժիտոմիրյան եպիսկոպոս Մացկևիչի կողմից և որ այնտեղ ծիսակատարությունները հայերեն լեզվով կատարվել են մինչև 1847 թ.¹⁰³։

8. ԲՈՒՉԱԶ

Դնեստրի վտակ Ստրիպա գետի ափին գտնվող Բուչաչ¹⁰⁴ հինավուրց քաղաքում հաստատված հայերի մասին տեղեկությունները ծայրաստիճան աղքատիկ են։ Ս. Բարոնչը, որ հատուկ զբաղվել է այդ քաղաքի պատմությամբ և 1882 թ. լվովում հրատարակել «Բուչաչյան հիշատակներ» մենագրությունը, Բուչաչի հայերի մասին նյութեր չի կարողացել հայտնաբերել, ուստի այդ գրքում, ինչպես և «Ուրվագծեր հայոց պատմության» աշխատության մեջ, ոչինչ չի գրում Բուչաչում հիմնված հայ գաղութի մասին։ Միայն մեկ անգամ Բուչաչի կոշկակարների համաքարությանը ինչ-որ վճարումներ անելու կապակցությամբ հիշատակվում են նաև հայ վաճառականները¹⁰⁵։

⁹⁷ М. Карачківский, Матеріали до історії міст на Поділлі, էջ 168։

⁹⁸ S. Barącz, նշվ. աշխ., էջ 76։

⁹⁹ նույն տեղում։

¹⁰⁰ В. К. Гультман, նշվ. աշխ., էջ 113։

¹⁰¹ S. Barącz, Żywoty sławnich ormian w Polsce, Lwów, 1856, էջ 176։

¹⁰² Բժշկյան, էջ 184։

¹⁰³ S. Barącz, Rys dziejów Ormiańskich, էջ 76։

¹⁰⁴ Ուկրաիններեն զրվում է «Буґаґ», լեհերեն՝ «Buczacz»։ «Կամենիցյան տարեգրություններում» (1564 թ.) այդ քաղաքի անունը հիշվում է «Պուչաչ» և կով (տե՛ս Ալիշան, նշվ. աշխ., էջ 34)։ Բուչաչն այժմ շրջանային կենտրոն է Ուկր. ՍՍՀ Տերնոպոլի մարզում։

¹⁰⁵ Sadok Barącz, Pamięniki Buczańskie, Lwów, 1882, էջ 20։

Բուլաշում հայ համայնքի առկայության վերաբերյալ միակ հավաստի տեղեկության հեղինակն է գերմանացի Ուլրիխ ֆոն Վերդումը (1632—1681), որո լեհաստանում կատարած իր ուղևորության ժամանակ, 1672 թ. փետրվարի 18-ին եղել է այդ քաղաքում և իր ուղեգրական նոթերում, որոնք յույս ընծայվեցին Լայպցիգում 1785—1788 թթ., գրել է նաև Բուլաշի հայկական եկեղեցու մասին¹⁰⁶։ Ուշագրավ այդ տեղեկությանը անծանոթ է եղել Ս. Դոնիգեիչը, ուստի և լեհահայոց եկեղեցիների նրա քարտեզում չի նշված Բուլաշի հայկական եկեղեցին։ Բուլաշի հայերի վերաբերյալ այս միակ հիշատակությունից է օգտվել Յա. Դաշկեիչը, որն իր ուսումնասիրության մեջ գրել է նաև այդ գաղութի մասին¹⁰⁷։

Բուլաշը շատ մոտ էր Յազլովեցին, և կարելի է ենթադրել, որ հայերն այնտեղ անցել են Յազլովեցի վրայով։ Ինչպես Յազլովեցը, այնպես էլ Բուլաշը պատկանում էր Բուլացկի, հետագայում՝ Պոտոցկի իշխաններին, որոնք դրական վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ և ձգտում էին տնտեսապես ձեռնտու պայմաններ ստեղծելու միջոցով պահել նրանց իրենց տիրույթներում։ Բուլաշում ու այլ վայրերում հաստատված հայերի նկատմամբ այդօրինակ վերաբերմունքի պատճառը այն էր, որ նրանք իրենց արհեստներով ու առևտրով նպաստում էին երկրի զարգացմանը։ Բացի դրանից, այդ վայրերը սահմանամերձ էին և մշտապես ենթակա օտար հարձակումների։ Երկրի տերերի համար միանգամայն ձեռնտու էր բնակեցնել քաղաքները եկվոր տարրով, որը ոչ միայն բարձրացնում էր քաղաքների եկամտաբերությունը, այլև պահանջի դեպքում ստվարացնում բնակավայրերի պաշտպանների շարքերը։

Տեղեկություններ չկան այն մասին, թե հայերը ե՞րբ են հաստատվել Բուլաշում և ի՞նչ թիվ են կազմել։ Գաղութի կյանքը դադարել է 1672 թ. աշնանը, երբ Պոդոլյե ներխուժած թուրքական զորքերը գրավել են նաև Բուլաշը։ Քաղաքի բնակիչների մի մասը հեռացել է Բրոդի։ Կարելի է ենթադրել, որ Բուլաշի հայերը ևս գնացել են Բրոդի, որտեղ գոյություն ունեին հինավուրց հայ գաղութ, որի անդամները ջերմ ընդունելություն էին ցույց տվել թուրքական հարձակման պատճառով Պոդոլյեի հարավային շրջաններից փախած հայ բնակչությանը։

9. ՊՈԴԼԱՅԻ

Պոդոլյեի հյուսիս-արևմտյան սահմանների մոտ գտնվող Պոդհայցի քաղաքում¹⁰⁸ հայերն ապրել են մինչև թուրքերի 1676 թ. հարձակումը։ Թուրքական տիրապետության ժամանակ, հավանորեն, ոչնչացել են նաև հայերին վերաբերող դիվանական փաստաթղթերը, ուստի ինքնավարության արտոնությամբ օժտված և սեփական եկեղեցի ունեցած Պոդհայցիի հայ գաղութի վերաբերյալ պահպանված տեղեկությունները խիստ սահմանափակ են։

¹⁰⁶ Я. Р. Да ш к е в и ч, Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX веков. Ереван, 1962, էջ 89—91։

¹⁰⁷ Я. Р. Да ш к е в и ч, Розселення вірменів..., էջ 158։

¹⁰⁸ Ուկրաինեի գրված է «Подгайці», լեհերեն՝ «Podhajce»։ Պոդհայցին այժմ գյուղական բնակավայր է Ուկր. ՍՍՀ Տերնուպոլի մարզի Բերեժանիի շրջանում։

Ս. Բարոնշի ձեռքի տակ եղած նյութերի համաձայն, 1590 թ. Պողոսյանին վարձակալել էր լեհահայ Յակուբ Սերեբկովիչը¹⁰⁹։ Սակայն հայտնի չէ, թե այդ ժամանակ հայերն ապրո՞ւմ էին քաղաքում, թե եկել են ավելի ուշ։ Պողոսյանում հայկական համայնքի առկայության վերաբերյալ հավաստի տեղեկությունները դալիս են XVII դարից։ Ս. Բարոնշը գրում է, որ 1675 թ. այնտեղի հայերի վոյթը եղել է Սեֆեր Բայբուրթը։ Միաժամանակ գրում է, որ Պողոսյանի հայերը չեն ունեցել եկեղեցի ու քահանա¹¹⁰։ Բայց նա սխալվում է։ Ուլրիխ Ֆոն Վերդումը, որը 1672 թ. փետրվարի 12-ին եղել է Պողոսյանում, իր ուղեգրություններում տեղեկություն է թողել նաև հայերի մասին։ Նա գրում է հայկական եկեղեցու և այն մասին, որ Պողոսյանում հայերը թվական գերակշռություն են ունեցել հրեաների նկատմամբ¹¹¹։ Կաթոլիկ քարոզիչ Ա. Մ. Պիդուի գրվածքում խոսվում է նաև Պողոսյանի հայ եկեղեցու կառուցման մասին, բայց կառուցման տարեթիվը որոշակիորեն չի նշված։ Գրված է, որ Ստանիսլավի ու Պողոսյանի եկեղեցիները կառուցվել են 1664 թ. հետո¹¹²։ Եկեղեցու շինարարության համար անհրաժեշտ միջոցներ տրամադրել է քաղաքի տերը։ Ուշագրավ վկայություն թողնելով այդ մասին, Ա. Մ. Պիդուն միաժամանակ հայտնում է. «Ազնուականք լեհացուց կառուցին քանի մի եկեղեցիս վասն Հայոց ի քաղաքս քաղաքս, ի ժվանեց ասեմ և ի Գորոդենցէ և ի Պոտլայցի, զորս հիմնեալ էին գաղթականքն ի Մուդալիոյ»¹¹³։ Ուրեմն Պողոսյանի հայերը գաղթել են Մուդալիայից, հետևապես նրանք այն ժամանակ դեռևս պահպանած պետք է լինեին իրենց ազգային սովորությունները, գուցե նաև լեզուն։

Երբ կաթոլիկություն տարածող ճիզվիտ վարդապետները և նրանց հայ աշակերտները փորձել են Պողոսյանում էլ իրականացնել բռնի միությունը կաթոլիկ եկեղեցու հետ, ապա հաջողվել են տեղական հայ բնակչության դիմադրությանը։ Ա. Մ. Պիդուն գրում է, որ լվովի պապական դպրանոցն ավարտած նորաթուխ կաթոլիկ քահանաները, լծվելով կաթոլիկության տարածման գործին, «երբեմն քան զչափն զանցանեն անխոհեմաբար. վասն որոյ և ծագեցան խռովութիւնք ոչ սակաւ ի ժողովրդեանն»¹¹⁴։ «Խռովարարները» թվում նշված են նաև Պողոսյանի հայերը¹¹⁵։ Դժբախտաբար մանրամասնություններ հայտնի չեն այդ պայքարի ու նրա հետևանքների մասին։ Կարելի է ենթադրել, որ լեհահայ այլ գաղութների նման ի վերջո հաջողվել է դավանափոխել նաև Պողոսյանի հայերին։

Պողոսյանի քաղաքի ու նրա բնակիչների, այդ թվում և հայերի մասին ուշագրավ նյութեր են պարունակում է. Զիլբերի ուղեգրական նոթերը։ Զիլբերին Պողոսյանում եղել է 1657 թ.։ Նա գրում է, որ «դա մշտապես լեհական թագավորի իշխանության տակ գտնվող մեծ ամրոց և հինավուրց քաղաք էր, բարեկարգ և օրհնյալ երկրամասի առևտրական կենտրոն»։ Ըստ նրա՝ «ամ-

¹⁰⁹ S. Barącz, Rys dziejów Ormianskich, էջ 163։

¹¹⁰ Նույն տեղում։

¹¹¹ Я. Р. Пашкевич, Поселення вйрменів..., էջ 169։

¹¹² «Բռնի միություն հայոց լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1854, էջ 153։

¹¹³ Նույն տեղում, էջ 208։

¹¹⁴ Նույն տեղում, էջ 251։

¹¹⁵ Նույն տեղում։

րոցում շատ հրեաներ ու հայեր կային, որոնք զբաղվում էին մահուդի պատ-
րաստմամբ»¹¹⁶։ Հարկ է նշել, որ Պողոսյանի բացառիկ տպավորություն է թո-
ղել Չելեբիի վրա։ Նա թվարկում է այնտեղ եղած զինվորական ուժերը (հրա-
զենով զինված 5000 գերմանացի հետևակային և 3000 հեծյալ) և նշում, որ
քաղաքում կային 4000 քարե ապարանքներ, 2000 կրպակներ, 9 հյուրանոց,
3 բաղնիք, 20 մեծ ու փոքր եկեղեցիներ և շատ այգիներ։ Է. Չելեբիի բերած
թվական տվյալներն, ընդհանրապես, վստահելի չեն։ Հեղինակը, ինչպես իրա-
վացիորեն նշել է նրա գործի ռուսերեն թարգմանության առաջաբանում՝
Վ. Վ. Մավրոդինը, երբեմն ընկնում է չափազանցության մեջ։

Չելեբին տվել է նաև Պողոսյանի քաղաքացիների, այդ թվում և, անկաս-
կած, հայերի նկարագրությունը։ «Քաղաքի բոլոր աղջիկները, — զարմանքով
գրում է նա, — սև մազեր ունեն, քայլում են գլխաբաց, գույնզգույն խալաթ-
ներով և դեղին փափուկներով։ Ողջ հագուստը դուրս քրիստոնեական է. նրանք
հագնում են տարբեր գույնի մահուդներից և զամշից կարված դուրմաններ՝
ոսկե և արծաթե կոճակներով, կապում են մազե կոշտ, ինչպես և մետաքսի
գոտիներ»։ Նա գրում է, որ քաղաքը հռչակված է սարժե կտորեղենով, գինի-
ների բաղամթիվ տեսակներով, պանիրներով, ինչպես և սպիտակ հացով¹¹⁷։

Պողոսյանի հայկական համայնքի անդամների թվի և աչքի ընկնող
առանձին անձանց վերաբերյալ տեղեկություններ չկան։ Քանի որ Պողոսյանի
հայերն ունեցել են եկեղեցի և վոյթ, հետևապես և ինքնավարություն, ապա
կարելի է կարծել, որ հայ գաղութը փոքրաթիվ չէր։ Իսկ Պողոսյանի կյանքը շա-
րունակվել է մինչև 1676 թ. թուրքական արշավանքը¹¹⁸։ Ա. Մ. Պիդուն գրում
է, որ Լեհաստանի հայերի թիվը բավական կրճատվեց Կամենիցի և Պողոսյա-
նի կործանման, Յազլովցի և այլ քաղաքների ավերման հետևանքով¹¹⁹։
Կարելի է ենթադրել, որ Պողոսյանի այլ բնակիչների նման, Պողոսյանի քա-
ղաքացիները ևս խիստ տուժել են թուրքական հարձակումներից։

10. ՍԱՏԱՆՈՎ

Սատանովը Պողոսյանի հնագույն բնակավայրերից է¹²⁰, գտնվում է
Դնեստրի վտակ Զբրուչ գետի ձախ ափին, Տերնոպոլի և Կամենեց-Պոդոլսկի
համարյա մեջտեղում։ Գրավոր փաստաթղթերի մեջ առաջին անգամ այն
հիշվում է 1404 թ., երբ լեհ թագավոր Վլադիսլավ Յագայլոն Սատանովը
նվիրում է լեհ ազնվական Պյոտր Շաֆրանեցին¹²¹։ Վ. Կ. Գուլդմանը բերում
է մի ավանդություն այն մասին, որ «Սատանովի առաջին բնակիչները եղել
են կարպատյան լեռնիկները, և որ հետագայում են միայն այստեղ թափան-
ցել հայերը, հույներն ու հրեաները»¹²²։ Նյութերի բացակայության պատճա-
ռով հայտնի չէ, թե մինչև XVIII դարը հայերն այնտեղ բնակվել են, թե ոչ։

¹¹⁶ Эвлия Челеби, նշվ. աշխ., էջ 57։

¹¹⁷ Նույն տեղում, էջ 58։

¹¹⁸ Я. Р. Дашкевич, Розселення вірменів..., էջ 169։

¹¹⁹ «Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի», էջ 153—154։

¹²⁰ Սատանովը (ուկր.՝ «Сатанів», լեհ.՝ «Satanów») այժմ գյուղական տիպի բնակավայր է Ուկր. ՍՍՀ Խմելնիցկու մարզի Գորոդոցկի շրջանում։

¹²¹ В. Б. Антонович, Летопись Сатановского монастыря, «Монография по истории Западной и Юго-Западной России», т. I, Киев, 1885, էջ 445։

¹²² В. К. Гюльдаме, նշվ. աշխ., էջ 163։

Սատանովում հայերի հաստատվելու մասին հավաստի տեղեկությունները վերաբերում են 1722 թ.։ Մինչև այդ Սատանովը, որը 1641 թ. քաղաք էր կոչվում և տեղացել էր Մագդեբուրգյան իրավունք, գտնվել է ծայրաստիճան ավերված ու քայքայված վիճակում։ 1676 թ. թուրքերը գրավել էին այն, ավերել և մոտ 4000 բնակիչների սրի քաշել¹²³։ 1722 թ. քաղաքի տերը՝ Ադամ Նիկոլայ Սենյավսկին այնտեղ կառուցում է ամրություններ և սկսում վերականգնել քաղաքը։ Աստիճանաբար Սատանովը դարձյալ ձեռք է բերում առևտրական կենտրոնի նշանակություն։ Ահա այս ժամանակ էլ այնտեղ հաստատվում են նաև հայեր, հույներ և հրեաներ, որոնք ակտիվորեն մասնակցում էին առևտրին¹²⁴։

1744 թ. քաղաքի նոր տերը՝ իշխան Չարտորիսկին (ի դեպ, Սատանովը XVI դարից սկսած մինչև XIX դարի վերջերը լեհ ազնվական մի ընտանիքից մեկ այլ ընտանիքի է անցել կանացի գծով՝ որպես օթիտ)¹²⁵ Սատանովի համար ստանում է չորս շաբաթ տևող տոնավաճառ անցկացնելու իրավունք¹²⁶։ Այս հանգամանքն, անտարակույս, նպաստում է Սատանովի բարգավաճմանը։

Ըստ Մ. Բալինսկու և Տ. Լիպինսկու, հայերը և հույները Սատանովում ունեին տարբեր տեսակի ապրանքներով լի խանութներ և աշխուժացրել են առևտուրն այդ քաղաքում¹²⁷։ Ս. Բարոնը, որը հենվում է նաև վերը հիշված հեղինակների վրա, գրում է, թե հայերը Սատանովում հայտնվել են հնագույն ժամանակներից ի վեր, բայց նրանք այդ քաղաքում այնքան չեն շատացել, որ կարողանան կազմել առանձին համայնք և ունենալ իրենց սեփական եկեղեցին ու քահանան¹²⁸։ Ըստ Վ. Մարչինսկու, հայերը Սատանովում այնքան էլ երկար չեն մնացել¹²⁹։

Սատանովի հայերի մասին հիշատակություններ կան նաև Ե. Սեցինսկու խմբագրած գրքում¹³⁰, ինչպես և Յա. Դաշկևիչի¹³¹, Ե. Վելիկիի և Ի. Գարնազայի վերջերս հրատարակած ուսումնասիրություններում¹³²։ Բայց նրանք ոչ մի նոր բան չեն ավելացնում նախորդ հեղինակների բերած կցկտուր տեղեկություններին։

Սատանովի հայերի վերաբերյալ նյութերի այսչափ աղքատությունը, հավանորեն, կապ ունի Սատանովի քաղաքային դիվանի ոչնչացման հետ։ Դեռևս 1831 թ. ոմն Սաբինսկի հրկիզել էր Սատանովի մագիստրատի դիվանը¹³³։ Այդ քաղաքի ներքին կյանքի պատմությունն արտացոլող մատյաններում վավերագրեր եղած կլինեին նաև Սատանովում հաստատված և նրա տնտեսական զարգացմանը մասնակցություն բերած հայ բնակիչների մասին։

¹²³ В. Б. Антонович, *Узл. азл.*, էջ 446։

¹²⁴ Նույն տեղում։ Տե՛ս նաև Վ. Կ. Գուլյմանի նշված աշխատության 168-րդ էջը։

¹²⁵ В. К. Гульдман, *Узл. азл.*, էջ 168։

¹²⁶ В. Б. Антонович, *Узл. азл.*, էջ 446։

¹²⁷ М. Balinski i T. Lipinski, *Узл. азл.*, էջ 148։

¹²⁸ S. Baracz, *Rys dziejów Ormiańskich*, էջ 165։

¹²⁹ W. Marczynski, *Узл. азл.*, էջ 305։

¹³⁰ Е. Сецинский, *Приходы и церкви Подольской епархии*, էջ 896—897։

¹³¹ Я. Р. Дашкевич, *Розселення вірменів...*, էջ 170։

¹³² «Історія міст і сіл УРСР. Хмельницька область», էջ 201։

¹³³ В. К. Гульдман, *Узл. азл.*, էջ 167։

МАЛЫЕ АРМЯНСКИЕ КОЛОНИИ В ПОДОЛИИ

(Краткая история)

В. Р. ГРИГОРЯН

(Резюме)

История армянских колоний, существовавших в Подолии в XIII—XIX вв., полностью не исследована. Некоторым из них (в Каменце-Подольском, Язловце, Могилеве-Подольском, Золочеве, Бережанах, Рашкове, Жванце) посвящены статьи и публикации различных документов: указов, судебных актов, уставов и т. д. Сведения о небольших, не столь многочисленных колониях [Великие и Малые Армяне, Кубачивцы, Дубровица (Барок), Бар, Умань, Юзефград (Балта), Бучач, Подгайцы, Сатанов] имеются в трудах ряда польских и украинских исследователей, а также в работах некоторых армянских авторов. В статье делается попытка изложения истории указанных армянских колоний Подолии.